**Արձանագրություն N 2**
**ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության կարիքների համար «ՏԿԵՆ-ՀԲՄԱՇՁԲ-2024/12Շ» ծածկագրով հրատապ բաց մրցույթ գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի հայտերի բացման և գնահատման նիստի**

Գնահատող հանձնաժողովի նիստը տեղի ունեցավ

մեկնարկ՝ 22.04.2024թ.
ժամը 16:00:
ավարտ՝ 30.04.2024թ.
ժամը 15:00:

Մասնակցում էին՝

***Հանձնաժողովի նախագահ՝***

| | |
|---|---|
| Արամ Խաչատրյան | ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության իրավաբանական վարչության պետ (հանձնաժողովի նախագահ՝ ԳՊ/ԳԱՊ) |

***Հանձնաժողովի անդամներ՝***

| | |
|---|---|
| Լուսինե Զաքարյան | ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության ճանապարհային ոլորտի քաղաքականության վարչության ճանապարհային քաղաքականության բաժնի գլխավոր մասնագետ (հանձնաժողովի անդամ՝ ԳՊ/ԳԱ) |
| Մարտիկ Ստեփանյան | ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության ճանապարհային ոլորտի քաղաքականության վարչության փորձագետ (հանձնաժողովի անդամ՝ ԳՊ/ԳԱ) |
| Մանե Մալխասյան | «Ճանապարհային դեպարտամենտ» հիմնադրամի հիմնանորոգման ծրագրերի կառավարման բաժնի պայմանագրերի կառավարման մասնագետ (հանձնաժողովի անդամ՝ ԳՊ/ԲԱ) |
| Աստղիկ Խաչատրյան | «Ճանապարհային դեպարտամենտ» հիմնադրամի հիմնանորոգման ծրագրերի կառավարման բաժնի ինժեներ (հանձնաժողովի անդամ՝ ԳՊ/ԲԱ) |

***Հանձնաժողովի քարտուղար՝***

| | |
|---|---|
| Կարեն Բաբախանյան | ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության գնումների համակարգման և կազմատնտեսական վարչության գնումների համակարգման բաժնի պետ (հանձնաժողովի քարտուղար՝ ԳՊ/ՄՀՄ) |

**Օրակարգ**
**Հայտերի բացման և գնահատման նիստի մասին**

**1. Հայտեր ներկայացրած մասնակիցների անվանումները և հասցեները**

**1.1** ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության կողմից էլեկտրոնային ձևով կազմակերպված «ՏԿԵՆ-ՀԲՄԱՇՁԲ-2024/12Շ» ծածկագրով գնման ընթացակարգին հայտ են ներկայացրել

| N | Մասնակցի անվանումը | Գտնվելու վայրը | Կապի միջոցը էլ.փոստ, հեռ.համար |
|---|---|---|---|
| 1 | «Բիդեք» ՍՊԸ | ՀՀ, ք. Երևան, Սասունցի Դավիթ 87 ա | info@bedeck.am<br>+374 99 10 00 74 |
| 2 | «Տերմոպրոտեկտ» ՍՊԸ | - | - |

**2. *Տեղեկատվություն՝ հրավերի վերաբերյալ հարցումների և պատասխանների մասին*.**

2.1 Հրավերի վերաբերյալ հարցումներ և պատասխաններ չեն եղել:

**3. Տվյալներ յուրաքանչյուր հայտում պահանջվող փաստաթղթերի առկայության և սահմանված պայմաններին համապատասխան կազմված լինելու մասին**

3.1 «Բիդեք» ՍՊԸ կողմից հայտով ներկայացված փաստաթղթերը կազմված են հրավերով սահմանված պահանջներին համապատասխան:

«Տերմոպրոտեկտ» ՍՊԸ կողմից հայտով չեն ներկայացվել հրավերով սահմանված փաստաթղթերը, այդ թվում գնային առաջարկը և հայտի ապահովումը: ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված Կարգի 40-րդ կետի 4-րդ ենթակետով սահմանվում է, որ «Հանձնաժողովը մերժում է այն հայտերը, որոնցում բացակայում է գնային առաջարկը և (կամ) հայտի ապահովումը, կամ եթե դրանք ներկայացված են հրավերի պահանջներին անհամապատասխան, բացառությամբ սույն կարգի 41-րդ կետով նախատեսված դեպքի: Գնումն էլեկտրոնային համակարգով իրականացվելու դեպքում հիմք է ընդունվում համակարգում կցված՝ մասնակցի կողմից հաստատված գնային առաջարկը.»:

Հաշվի առնելով վերոգրյալը գնահատող հանձնաժողովը որոշեց.

- «Բիդեք» ՍՊԸ կողմից ներկայացված հայտը գնահատել բավարար,
- «Տերմոպրոտեկտ» ՍՊԸ կողմից ներկայացված հայտը մերժել:

*Ընդունվել է որոշում՝ կողմ - 5, դեմ – 0*

**4. Յուրաքանչյուր մասնակցի առաջարկած գինը.**

Մասնակիցները ներկայացրել են հետևյալ գնային առաջարկները.

| **Մասնակցի անվանումը** | Առաջարկված գինը /առանց ԱԱՀ/ ՀՀ դրամ | Առաջարկված գին /ներառյալ ԱԱՀ/ ՀՀ դրամ |
|---|---|---|
| | ՉԱՓԱԲԱԺԻՆ 1<br>**Հ-6, /Հ-2/ –Նոր Գեղի - Եղվարդի տրանսպորտային հանգույց - /Մ-1/ ավտոճանապարհի Հրազդան գետի վրայի կամրջի վերանորոգման աշխատանքներ** | |
| | *Նախահաշվային գին*<br>463 786 590 ՀՀ դրամ | |
| **«Բիդեք» ՍՊԸ** | **365 685 076** | **438 822 091** |
| «Տերմոպրոտեկտ» ՍՊԸ | - | - |

Հիմք ընդունելով գնահատման արդյունքները գնահատող հանձնաժողովը ***որոշեց***.

- Որպես գնման ընթացակարգի հրավերի պահանջներին բավարարող և նվազագույն գնային առաջարկ ներկայացրած մասնակից «ՏԿԵՆ-ՀԲՄԱՇՁԲ-2024/12Շ» ծածկագրով գնման ընթացակարգի ընտրված մասնակից ճանաչել՝ «Բիդեք» ՍՊԸ-ին:

- Հաստատել պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարության տեքստը:

- <<Գնումների մասին>> ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն անգործության ժամկետ սահմանել 10 օրացուցային օր:

- Պայմանագիր կնքելու նպատակով անգործության ժամկետի ավարտից հետո ընտրված մասնակցին ծանուցել պայմանագրի նախագիծը և առաջարկել 5 աշխատանքային օրվա ընթացքում ներկայացնել պայմանագրի ապահովում գնման գնի 10 (տասը) տոկոսի չափով և որակավորման ապահովում՝ գնման գնի 30 (երեսուն) տոկոսի չափով:

*Ընդունվել է որոշում՝ կողմ - 5, դեմ – 0*

*5. Նիստին ներկա հանձնաժողովի անդամների անունները, ազգանունները և ստորագրությունները*

Գնահատող հանձնաժողովի նախագահ՝ _____ Ա. Խաչատրյան

հանձնաժողովի անդամներ՝ _____ Լ. Զաքարյան

_____ Մ. Ստեփանյան

_____ Մ. Մալխասյան

_____ Ա. Խաչատրյան

Գնումները համակարգող՝ _____ Կ. Բաբախանյան